ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«01» մայիսի 2019 թվականի N 66-Ա

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԻՍԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցները հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 934-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 143-Ն հրամանի 24-րդ և 30-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ներքին աուդիտի բաժնի 2019 թվականի տարեկան ծրագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ներքին աուդիտի բաժնի պետ Կարեն Թորոսյանին և գլխավոր մասնագետ Վահան Մարգարյանին, 2019 թվականի ապրիլի 8-ից մինչև մայիսի 7-ը ներառյալ (20 աշխատանքային օր) Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ենթակայության տակ գտնվող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության Գորիսի մասնաճյուղում իրականացնել 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համակարգի գնահատման աուդիտ:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

4/1/2019

X

VERIFIED OCSP 01-Apr-19 12:05:04 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118